ՀՀ Լոռու մարզի Փամբակ խոշորացված
համայնքի ղեկավար Սուրեն Կոստանդյանին

Հարգելի պարոն Կոստանդյան,

Հայտնում ենք Ձեզ, որ «ԷՎԵԼ ՊԻՍ» ՍՊ ընկերությունը նախատեսում է ՀՀ Լոռու մարզի Փամբակ խոշորացված համայնքի Վահագնաձոր գյուղերի վարչական տարածքում իրականացնել փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման և շահագործման աշխատանքներ:

Դիմում ենք Ձեզ՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 19.11.2014թ. «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» N 1325-Ն որոշմամբ և սահմանված «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգի» համաձայն՝ Ձեռնարկողի նախատեսվող գործունեության, դրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացի վերաբերյալ ծանուցման, հանրային քննարկում կազմակերպելու և հանրության մասնակցություն ապահովելու խնդրանքով:

Խնդրում ենք տալ Ձեր համաձայնությունը հանրային լսումն իրականացնելու համար, միաժամանակ աջակցել և ապահովել մասնակցությունը հանրային քննարկումներին, դրանց արձանագրությունը, տեսաձայնագրությունը, ինչպես նաև արված առաջարկություններն ու դիտողություններն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով լիազոր մարմին ներկայացնելու համար:

Միաժամանակ, սահմանված կարգով սույն դիմումին կից ներկայացնում ենք նախատեսվող գործունեության վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն և նախատեսվող գործունեության տարածքի իրավիճակային քարտեզ-սխեմա:

Կանխավ շնորհակալություն

«ԷՎԵԼ ՊԻՍ» ՍՊԸ -ի տնօրեն՝
Ա. Ալեքսանյան

Նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցություն

«Վահագնաձոր» փոքր հիդրոէլեկտրակայանի (ՓՀԷԿ) կառուցումն ու շահագործումը էական ռիսկեր չի կարող ունենալ շրջակա միջավայրի տարբեր բաղադրիչների վրա: Նախագիծը նախատեսում է օգտագործել Փամբակ գետի բնական հոսքի մի հատված՝ 72 մ բարձրության անկումով, տարեկան մոտ 20.5 մլն կՎտժ էլեկտրաէներգիա արտադրելու նպատակով: Գործունեության ընթացքում հնարավոր է հետևյալ ազդեցությունների առաջացում:

1. **Հողային ռեսուրսներ** – Շինարարական փուլում կիրականացվի նախագծով նախատեսված հողային աշխատանքներ, ներառյալ խրամուղիների փորում ճնշումային խողովակաշարի տեղադրման համար: Հնարավոր են փոքր ծավալի ազդեցություն հողային ֆոնդի վրա, որոնք մեղմացնելու համար նախատեսվում է հողի վերականգնում և կանաչապատում:
2. **Ջրային ռեսուրսներ** – Ջրառը կիրականացվի համաձայն ՀՀ օրենսդրությամբ հաստատված ջրային թողքերի (ՋԹ) և խստորեն կպահպանվի էկոլոգիական թողքը: Այս միջոցառումը թույլ կտա կանխել գետի հունի չորացումը և ապահովել ոռոգման նպատակների ջրամատակարարումը:
4. **Մթնոլորտային օդ և աղմուկ** – Շինարարության ընթացքում տեխնիկայի գործարկման հետևանքով կարող է ոչ մեծ ազդեցություն ունենալ փոշու և աղմուկի ժամանակավոր ավելացման տեսքով: Այս ազդեցությունները կառավարվելու են ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ, սահմանված նորմերի պահպանումով և աշխատանքների ժամանակացույցի ճիշտ պլանավորմամբ:
5. **Սոցիալական ազդեցություն** – Նախագիծը կունենա դրական ազդեցություններ. կստեղծվեն նոր աշխատատեղեր, կզարգանա տեղական ենթակառուցվածքը, համայնքն կստանա հարկային և սոցիալ-տնտեսական օգուտներ:

Ընդհանուր առմամբ, «Վահագնաձոր» ՓՀԷԿ-ի նախագծի ազդեցությունը բնապահպանական տեսանկյունից կարելի է գնահատել որպես կառավարելի գործունություն: Պետք է իրականացվեն նախատեսված մեղմման և վերականգնման միջոցառումները: Դրանք ներառում են հողերի պահպանություն, ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործում, կենսաբազմազանության պաշտպանություն, մթնոլորտային օդի որակի վերահսկում և մշտադիտարկումների համակարգի ներդրում:

Նախագծի ամբողջական իրականացումը կնպաստի Հայաստանի հիդրոէներգետիկ ներուժի զարգացմանը և էներգետիկ անվտանգության ամրապնդմանը՝ նվազագույնի հասցնելով շրջակա միջավայրի վնասակար ազդեցությունները:

<<ՎԱՀԱԳՆԱՁՈՐ>> ՓՀԷԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ-ՍԽԵՄԱ